ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

С. А. АЛАХВЕРДЯН—«*Роль рабочего класса в победе колхозного строя в Армении» (1927—1935)*. Издательство АН Армянской ССР, 1969 г., тираж 1000, 208 стр

Ներկա աշխատությունում, որ լույս է տեսել ռուսերեն լեզվով, լուսաբանված է մեր հանրապետության բանվոր դասակարգի ցույց տված բաղմակողմանի օգնությունը գյուղի աշխատավորությանը՝ կոլտնտեսային շինարարության տնտեսական ու կուլտուրական զարգացման գործում։ Ինչպես նաև արտացոլված է վերջինիս ազդեցությամբ գյուղացիության վերափոխման պրոցեսը։

Սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո Հայաստանի աշխատավորությունը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, և եղբայրական մյուս ժողովուրդների անշահախնդիր օգնությամբ, ձեռնամուխ եղավ ժողովրդական տնտեսության վերականգնմանը, որն արդեն 1925 թ. վերջում հիմնականում իրագործվեց։ Այնուհետև ծավալվեցին երկրի սոցիալիստական ինդուստրացման աշխատանքները։ 1927 թ. ինդուստրացման քաղաքականությունը ևս տվեց իր ցանկալի արդյունքները։ Բայց արդյունաբերությունից խիստ ետ էր մնում գյուղատնտեսությունը, որը, բնականաբար, բացասաբար էր անդրադառնում երկրի ժողովրդական տնտեսության վերելքի վրա։

Անհրաժեշտ էր գյուղում ևս փոխել արտադրահարաբերությունները, որի համար էլ մեր կուսակցությունը ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացման կուրս։

Այս հարցի լուսաբանմանն է նվիրված մենագրության առաջին գլուխը, ուր հանգամանորեն շարադրված է բանվոր դասակարգի մղած պայքարը գյուղի կոլեկտիվացման համար։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, հողի հարցը բարդացել էր նաև այն պատճառով, որ Արևմտյան Հայաստանի թուրքական յաթաղանից փախած հազարավոր հայ ընտանիքներ, որոնք հիմնականում հողագործներ էին, հանգրվան էին գտել նորաստեղծ հանրապետությունում, և անհրաժեշտ էր նրանց ևս ապահովել տնամերձներով։ Հեղինակը այս գլխում կանգ է առել նաև այն միջոցառումների վրա, որոնցով լուծվել է վերը նշված խնդիրը։

Համատարած կոլեկտիվացման և կուլակությանը որպես դասակարգի վերացման գործում բանվոր դասակարգի կատարած դերին է նվիրված գրքի հաջորդ գլուխը, ուր բերված են կուսակցության և կառավարության կայացրած որոշումներն այս հարցի իրագործման վերաբերյալ և ցույց է տրված կուլակության մղած դասակարգային պայքարը նորաստեղծ սովետական իշխանության դեմ։

Գրքի երրորդ՝ եզրափակիչ գլխում շարադրված է Հայաստանի բանվոր դասակարգի կատարած ներդրումը կոլտնտեսային կարգերի ամրապնդման գործում և նրա մղած պայքարը գյուղի կուլտուրական հեղափոխության վերջնական հաղթանակի համար։

Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ — «Լևոն Բաշալյան», *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը 1000, 266 էջ։*

Մենագրությունը նվիրված է արևմտահայ գրականության գրեթե չգնահատված տաղանդավոր Ներկայացուցիչներից մեկի՝ Լևոն Բաշալյանի կյանքին և գրական ստեղծագործությանը։ Հեղինակը ձգտել է ի մի բերել Բաշալյանի գրական ժառանգությունը և որոշել նրա տեղը հայ գրականության մեջ։

Արևմտահայ ռեալիստական արձակի, մասնավորապես նորավեպի և պատմվածքի զարգացման գործում մեծ երախտիք ունի Բաշալյանը։ Նրա թողած գրական ժառանգությունը շատ չէ, բայց, այդուհանդերձ, ստեղծել է գեղարվեստական մի շարք արժեքավոր գործեր, որոնք հայ դասական գրականության ընտիր էջերից են։

Ներկա գրքույկը Բաշալյանին նվիրված մենագրական ուսումնասիրության առաջին փորձն է, որի նպատակն է համառոտակի գծել գրողի ստեղծագործական ուղին և ներկայացնել նրա դիմանկարը։ Այդ պատճառով էլ հեղինակի ուշադրության կենտրոնում է Բաշալյանի գեղարվեստական ժառանգությունը, իսկ հասարակական, հրապարակախոսական, գրաքննադատական ու

յրագրական գործունեությանը անդրադարձել է այնքանով, որքանով դա անհրաժեշտ է եղել ամբողջական գաղափար տալու տաղանդավոր արձակագրի մասին։

ԹՈՒՄԱՆՅԱՆ — «Արվեստի մասին», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969 թ., տպաքանակը 4000, 284 էջ։

«Ինձ շատ ուրախացրեց Թումանյանը արվեստի մասին ժողովածուն։ Վաղուց պիտի արվեր այդ։ Թումանյանը մեր ազգային մեծ բանաստեղծն է և նրա ամեն մի խոսքը մեզ համար սրբություն է»։ Մ. Սարյանի այս գնահատականով է բացվում «Թումանյանը արվեստի մասին» ժողովածուն, որ մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակել է ԳԱ արվեստի ինստիտուտը։

Ինչպես ամեն մի մեծ գրող, Թումանյանը ևս տարբեր առիթներով անդրադարձել է հայ ազգային մշակույթի համարյա բոլոր բնագավառներին։ Նա իր ասույթներում ու նամակներում ընդգրկել է թատրոնի, նկարչության, երաժշտության, ճարտարապետության, հնագիտության ու ազգագրության հարցերը և եռանդուն մասնակցություն է ունեցել հայ արվեստի ստեղծագործական միությունների ու կազմակերպությունների աշխատանքներին։

Նրա խորին համոզմամբ, քաղաքակիրթ ժողովուրդ դառնալու համար պետք է հովանավորել ու զարգացնել գեղարվեստը։ Եվ ինքն անձամբ այդ արել է։ 900-ական թվականներից մինչև 20-ական թվականների սկիզբը դժվար է հայ արվեստի ու գրականության բնագավառում նշել մի կարևոր իրադարձություն, որի նախաձեռնողը կամ եռանդուն մասնակիցը չլիներ Թումանյանը։ Դրա լավագույն վկայությունն է «Արվեստի մասին» ժողովածուն, ուր ամփոփված են նրա բանաստեղծությունները, հոդվածները և նամակները ուղղված տարբեր արվեստագետների կամ այդ բնագավառի աշխատողների։

Գրքի բանաստեղծություններ բաժինը բացվում է նկարիչ Գ. Բաշինջաղյանի «Զորագետը գիշերով» նկարի առջև ստեղծագործությամբ, որին հաջորդում են այլ բանաստեղծություններ նվիրված Պ. Ադամյանին, Հ. Այվազովսկուն և Գ. Տեր-Դավթյանին։

Հոդվածներ բաժնում տեղ են գտել Թումանյանի տարբեր առիթներով գրած հոդվածները թատրոնի և դրամատուրգիայի, կերպարվեստի, երաժշտության ու ճարտարապետության վերաբերյալ, որոնցում արտացոլված են նրա յուրօրինակ մոտեցումը և գնահատականը արվեստի նշված բնագավառներին։

Թումանյանը լայն շփման մեջ է եղել Անդրկովկասի և Ռուսաստանի բազմաթիվ գրողների ու արվեստագետների հետ։ Այդ են վկայում նրա նամակագրությունները արվեստի վարպետների հետ և վերջիններիս հուշերը նրա մասին։

Հավելվածներ բաժնում զետեղված են Ս. Թադևոսյանի, Փ. Թերլեմեզյանի, Ա. Մայիլյանի, Ա. Տիգրանյանի, Մ. Սարյանի, Լ. Գուդիաշվիլու, Յա. Նիկոլաձեի և այլոց հուշերը անմահ Թումանյանի մասին։

«Թումանյանը արվեստի մասին» ժողովածուն, որ լավագույն նվեր է մեծ գրողի ծննդյան 100-ամյակին, կազմել է Թումանյանի թոռը՝ Ի. Ռ. Սաֆրազբեկյանը։ Այն խմբագրել է Թումանյանի ստեղծագործությունների քաջատեղյակ մասնագետ Արամ Ինճիկյանը։

*

«Իսկուստվո» հրատարակչությունը նախաձեռնել է «Սովետական գեղագիտության և արվեստի տեսության պատմությունից» շարքի հրատարակմանը։ Սովետական գեղագիտությունը անցել է կարճ, բայց բացառիկ հարուստ և ինքնատիպ ճանապարհ։ 20—30-ական թվականների բուռն ծաղկումից հետո սովետական գեղագիտական միտքը ապրեց երկարատև ընդհատման ժամանակաշրջան։ Եվ միայն 50-ական թվականների վերջին սկսվեց նրա զարգացման նոր, արդյունավետ շրջանը։ Նախընթաց ժամանակաշրջանի արժեքավոր ժառանգությունը, սակայն, դեռ լիովին չի ըմբռնված ու ուսումնասիրված։ Վիդոտսկու, Ասմուսի, Բախտինի, Էյխենբաումի և մյուս գիտնականների փայլուն գործերը մնում են գիտական հասարակայնության ուշադրության կենտրոնում։ «Իսկուստվո» հրատարակչության շնորհակալ աշխատանքը թույլ կտա ընդհանրացնել և օբյեկտիվորեն գնահատել սովետական գեղագիտության և արվեստի տեսության հարուստ փորձը։

Հրատարակված են շարքի առաջին երկու գրքերը՝ Լ. Վիդոտսկու և Վ. Ասմուսի գործերը։ Հետագայում ենթադրվում է հրատարակել Մ. Ռոզենտալի, Լ. Բոգատիրյովի, Ի. Իլյինի, Մ. Լիֆշիցի և մյուս հեղինակների աշխատությունների ժողովածուները։

Л. С. ВЫГОТСКИЙ, Психология искусства, М., «Искусство», 1968, 576 стр.

Ականավոր սովետական գիտնական Լ. Վիգոտսկին նշանակալի ներդրում է կատարել 20-րդ դարի գիտական հոգեբանության զարգացման բնագավառում։ Իր գործերում Վիգոտսկին հոգեբանության տարբեր պրոբլեմները գիտում էր սոցիալական տեսանկյունից։ «Արվեստի հոգեբանությունը» աշխատությունը՝ գրված դեռ 1925 թվականին, չի հրատարակվել հեղինակի կենդանության օրոք։ Գրքի առաջին հրատարակությունը իրագործվեց 1965 թվականին։ Այն արժանացավ ընդհանուր հավանության, որին հաջորդեց նոր, երկրորդ, լրացված և ուղղված հրատարակությունը։

Հեղինակի առջև դրված գլխավոր հարցը հետևյալն էր. ի՞նչն է տալիս ստեղծագործությանը գեղարվեստականություն, ի՞նչն է դարձնում նրան արվեստի գործ։ Մտահղացումը կայանում էր նրանում, որ, վերլուծելով գեղարվեստական գործի ստրուկտուրայի առանձնահատկությունները, վերստեղծվեր նրա առաջացրած ազդեցության ստրուկտուրան։ Դրա մեջ էր նա տեսնում այն քանի գաղտնիքը, թե ինչու մեծ ստեղծագործությունները շարունակում են հրապուրել դարերի ընթացքում։

Աշխատության առաջին գլուխներում Վիգոտսկին հանդես է գալիս արվեստի հին և նոր իդեալիստական տեսությունների, ֆրեյդիզմի, ֆորմալիզմի քննադատությամբ։

Այնուհետև, նա անցնում է հիմնական խնդրին՝ բովանդակության մեջ ներթափանցելու ճանապարհով գեղարվեստական ստեղծագործության ստրուկտուրայի վերլուծությանը։ Վերլուծելով որոշակի երկեր՝ առակ, պատմվածք, Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը, Վիգոտսկին բացահայտում է արվեստի ստեղծագործության ազդեցությունը ստեղծող «ներքին շարժումը»։

Գրքի նոր հրատարակության մեջ առաջին անգամ հավելվածի ձևով հրատարակվում է «Շեքսպիրի՝ դանիական արքայազնի՝ Համլետի մասին ողբերգությունը» ընդարձակ ուսումնասիրությունը։ Այդ գործում Վիգոտսկին առաջին անգամ դիմում է բուն պիեսի հետազոտմանը, առանց անդրադառնալու մինչև այդ կուտակված պատմագրականագիտական և կենսագրական ենթադրություններին։

Վիգոտսկու գրքում ամեն ինչ չէ, որ դիմացել է ժամանակի քննությանը, սակայն նրա դրույթներից շատերը փայլուն ձևով հաստատվեցին։ Գրքում կան և վիճելի հարցեր, բայց դա բնական է, քանի որ այդ գիրքը ստեղծագործական ուսումնասիրություն է։

В. Ф. АСМУС, Вопросы теории и истории эстетики, М., «Искусство», 1968, 654 стр.

Սովետական անվանի գիտնական Վ. Ֆ. Ասմուսի ընտիր աշխատությունների ժողովածուն «Սովետական գեղագիտության և արվեստի տեսության պատմությունից» շարքի երկրորդ հատորն է։ Ժողովածուում ներկայացված հոդվածները տպագրվել են տարբեր ժամանակներում՝ պարբերականների էջերում։ «Ես երբեք չեմ դրել կոնյուկտուրային գործեր,— գրում է հեղինակը,— բայց միշտ ձեռնարկել եմ թեմաներ, որոնք գիտության մեջ արդիական են եղել ոչ միայն տվյալ վայրկյանին, երբ ես առաջին անգամ դիմում եմ դրանց, այլև պահպանել են արդիական նշանակությունը գալիք ժամանակներում ևս»։ Հեղինակի համար հիմնական հետաքրքրություն է ներկայացնում թափանցումը գեղագիտական ուսումնքների պատմական կազմավորման տեսական բովանդակության մեջ։

Ժողովածուն կազմված է երկու մասից՝ պատմական և տեսական, սակայն այդ մասերը ներգործող են, ներթափանցող։ Հեղինակի հետաքրքրությունները գեղագիտության պատմության մեջ կենտրոնանում են երեք կարևորագույն ժամանակահատվածների վրա՝ անտիկ գեղագիտության պատմություն, գերմանական կլասիկ գեղագիտության պատմություն, ռուս գեղագիտական մտքի պատմություն։

Անտիկ գեղագիտության պատմությունը ներկայացված է երկու հոդվածներով, որոնցում քննվում են գրական քննադատության հարցերը Արիստոֆանի կատակերգություններում և Արիստոտելի գեղագիտությունը։ 1936—1938 թթ. գրված այդ հոդվածները չեն կորցրել իրենց նշանակությունը և այսօր։ Դրանցից առաջինում փաստորեն ցույց է տրված անտիկ գեղարվեստական քննադատության ծագումը, երկրորդում՝ Արիստոտելի տեղը գեղագիտության հիմնադիրների շարքում։

Երկրորդ բաժնի հոդվածները՝ նվիրված արտասահմանյան գեղագիտությանը («Շիլլերը իբրև քննադատ» և «Դյոթեն Էկկերմանի զրույցներում»), կենտրոնականներն են ժողովածուում։ 18—19-րդ դարերի գերմանական գեղագիտությունը հեղինակի հատուկ հրապուրանքի առարկան

է։ Ընթերցողներին հայտնի է Վ. Ասմուսի «18-րդ դարի գերմանական գեղագիտությունը» (Մ., 1963) դիրքը, որը մեծապես տարբերվում է փաստագրական և տեղեկատու բնույթի հանրամատչելի հրատարակություններից։

Գյոթեի մասին հոդվածը հրապարակվել է 1934 թ.՝ որպես նախաբան Էկկերմանի «Զրույցներ Գյոթեի հետ» գրքին, իսկ Շիլլերի մասին 1957 թ. գրված հոդվածը ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ։ Ինչպես վկայում է հեղինակը, նրա ընտրությունը կանգ է առել Շիլլերի և Գյոթեի վրա, որովհետև երկուսն էլ իրենց գեղագիտական հայացքները ձեռք են բերել ոչ միայն փիլիսոփայական և գեղագիտական գրականության ուսումնասիրությունից, այլ նաև արվեստի պրակտիկայից՝ սեփական և օտար։

Հեղինակի հետաքրքրությունների բազմակողմանիությունը արտահայտող ամենատարբեր հարցերին են նվիրված ռուս գեղագիտության պատմությանը վերաբերող հոդվածները՝ «Պուշկինը և ռեալիզմի տեսությունը», «Լերմոնտովի գաղափարների շրջանակը», «Խելքից պատուհասը» իբրև գեղագիտական խնդիր»։ Հատկապես պետք է առանձնացնել «Լ. Տոլստոյի աշխարհայացքը և գեղագիտությունը» (1961 թ.) և «Ռուսական սիմվոլիզմի գեղագիտությունը» (1937 թ.) հոդվածները։ Առաջինում հեղինակը փորձում է բացահայտել Տոլստոյի հակասությունների հիմքը։ Ոչ պակաս բարդ և քիչ լուսավորված հարցի է նվիրված և երկրորդ հոդվածը։ Ռուսական սիմվոլիզմի փիլիսոփայական և գեղագիտական ակունքների բացահայտումը օգնում է ավելի լավ ըմբռնել այդ բարդ և հակասական երևույթի օբյեկտիվ արժեքը։

Բնական է, որ տարբեր ժամանակներում գրված հոդվածները իրենց վրա կրում են տվյալ ժամանակի կնիքը։ Սակայն նրանցից յուրաքանչյուրում երևում է հեղինակի՝ սովետական անվանի գիտնականի միասնական ստեղծագործական դեմքը, որի գործերը բարձր են գնահատվում ոչ միայն Միության սահմաններում, այլև նրա սահմաններից դուրս։

«Սովետական գեղագիտության և արվեստի տեսության պատմությունից» շարքը հաջող սկիզբ ունի։ Ցանկանանք նրան նույնպիսի շարունակություն։